

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՎԱՐՈՒԺԱՆ ՆՈՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ ԼՈՒԾՈՒՄԸ
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ԺԳ. 00. 01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների
դոկտոր Յ.Յ. Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների
դոկտոր Ս. Բ. Սողոյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու Լ.Խ. Միլիտոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Յ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. սեպտեմբերի 26-ին,
ժամը 14⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՂ-ի մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության
ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. օգոստոսի 25-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից սոցիալ-տնտեսական իրավիճակը թելադրում է ՆՄԿ որակի բարձրացման անհրաժեշտություն: Կրթության արդիականացման հայեցակարգում առանցքային դրույթ է այն, որ կրթական քաղաքականության գլխավոր խնդիրը կրթության որակի ապահովումն է՝ անձի պահանջները բերն, հասարակության և պետության ներկա և հեռանկարային պահանջներին համապատասխան:

Տնտեսության և սոցիալական ոլորտում առկա տեղաշարժերը ՆՄԿ մասնագետներից պահանջում են գործունեության գիտակցված վերլուծության համար անհրաժեշտ ընդհանուր տեսական և մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ:

Հոգեբանամանկավարժական հետազոտությունների և մանկավարժական փորձի (Յ.Ա. Արդուլինա, Ա.Վ. Աֆանասևա, Դ.Մ. Գրիշին, Վ.Պ. Ջինչենկո, Պ.Ֆ. Կապտերև, Ա.Գ. Կուզնեցովա, Ա.Ի. Վրոնցստինյ) վերլուծությունը վկայում է, որ ՆՄԿ ոլորտում ավանդական ուսումնադաստիարակչական գործընթացը չի ապահովում կրթության պահանջված որակը: Դա պայմանավորում է ՆՄԿ արդիականացման անհրաժեշտությունը՝ տեսական և մեթոդաբանական հիմնավորմամբ կրթության կառավարման մոդելի ստեղծման և ներդրման միջոցով, որը պետք է հիմնված լինի նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների հեռանկարային զարգացման գաղափարի վրա և էական ազդեցություն ունենա սոցիալ-տնտեսական գործընթացների վրա: Այդօրինակ կրթական համակարգում պետք է շեշտադրվեն մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնառողների կողմից նոր գիտելիքներ յուրացնելու դրդապատճառների ձևավորումը, ժամանակակից ու հեռանկարային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան շրջանավարտների մասնագիտական մրցունակության ապահովումը, մասնագիտական ինքնիրացման, ինքնորոշման, ռեֆլեքսիայի, կարողությունների ու հմտությունների ձևավորումը:

Սոցիալ-տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում ավելի ու ավելի են կարևորվում նոր աշխատաշուկային և տնտեսական զարգացման համաշխարհային պահանջներին ինտեգրումը և այս համատեքստում ՆՄԿ բարեփոխումների իրականացումը: Մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում ՆՄԿ պետական չափորոշիչների ներդրումը պահանջում է ուսուցման նոր սկզբունքներ, մոտեցումներ, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների մշակում, ուսուցման գործընթացի տեղեկատվական ապահովման համակարգի և գիտելիքների, կարողությունների, հմտությունների վերահսկողության մեթոդների կատարելագործում: Բարեփոխումների իրականացման երաշխիք են մասնագետների պատրաստման որակի բարձրացումը՝ ըստ նոր պահանջների, քանի որ ավանդական որոշ մեթոդներ չեն կարող ապահովել մասնագետների պատրաստման գործընթացի արդյունավետությունը:

Վերջին տարիներին մի շարք երկրներում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում մեծ ուշադրություն է հատկացվել ՆՄԿ և մասնագետների պատրաստման որակի ապահովման հիմնախնդրի տեսական և մեթոդաբանական հիմնավորմանը (Օ.Ա. Արդուլինան, Ս.Յա. Բատիշև, Օ.Ի. Գլուկինը, Ի.Ա. Ջիննյայան, Վ.Ա. Կալնեյը, Մ.Վ. Կլարինը, Մ.Ն. Մալեինան, Վ.Պ. Սերգեևան, Ա.Պ. Սեյտեշև, Օ.Ն. Օլեյնիկովան և այլք):

Սակայն Հայաստանի Հանրապետությունում հետխորհրդային շրջանում դեռևս գիտական փորձ չի ձեռնարկվել հետազոտելու և ամբողջական տեսքով ներկայացնելու ՆՄԿ որակի ապահովման հիմնախնդիրները և առաջարկելու դրանց լուծման գիտագործնական մոտեցումներ:

Վերոնշյալ հիմնախնդրի կարևորությամբ էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը ՆՄԿ բարեփոխումների շրջանակներում մանկավարժական պայմանների համալիրի ներդրման միջոցով մասնագետների պատրաստման որակի ապահովման հիմնախնդրի լուծումն է:

Հետազոտության օբյեկտը նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագետների պատրաստման գործընթացն է:

Հետազոտության առարկան նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության բարեփոխումների համատեքստում կրթական չափորոշիչների և ուսուցման գործընթացի կատարելագործման միջոցով մասնագետների պատրաստման որակի ապահովման գործընթացն է:

Հետազոտության գիտական վարկածը մեր այն ենթադրության մեջ է, որ նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացի կատարելագործման միջոցով կապահովվի մասնագետների պատրաստման որակը, եթե՝

- մշակվի ՆՄԿ հաստատությունների զարգացման ռազմավարություն,
- պետական կրթական չափորոշիչների մշակման հիմքում դրվեն մասնագետների պատրաստման որակի ապահովման գիտամանկավարժական հիմունքներն ու ժամանակակից հասարակության՝ որակյալ մասնագետների պահանջները,
- ըստ արդիականության զարգացումների նորացվեն կրթության բովանդակությունը և կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները, պարբերաբար իրականանա մասնագիտական կրթության մշտադիտարկում,
- ներդրվեն հանրակրթական, մասնագիտական առարկաների և արտադրական ուսուցման համագործակցային, անձնակողմնորոշիչ, նորագույն տեխնոլոգիաներ և մեթոդական համալիրներ,
- ապահովվեն դասավանդողների պարբերական վերապատրաստումը, կրթական միջավայրի որակյալ պայմանները և ռեսուրսները, կրթության որակի ապահովման ենթակառուցվածքների գործունեության փոխկապվածությունն ու համաձայնեցվածությունը:

Հետազոտության խնդիրներն են.

1. Հետազոտել ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի տեսական և մեթոդաբանական նախադրյալները:
2. Վերլուծել ՆՄԿ համակարգում բարեփոխումների ընթացքը, հիմնավորել բարեփոխումների անհրաժեշտությունը տարածաշրջանային գործոնների համատեքստում:
3. Բացահայտել ՆՄԿ որակի ապահովման չափանիշներն ու ցուցանիշները:
4. Մշակել նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման մանկավարժական համակարգի գործունեության արդյունավետության մանկավարժական պայմանների համալիր:
5. Մշակել մեթոդական հանձնարարականներ մասնագետների պատրաստման որակի բարելավման ուղղությամբ, հիմնավորել կրթության որակի ապահովման մանկավարժական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել անձնակողմնորոշիչ ուսուցման հայեցակարգը, մշտադիտարկման և մանկավարժական դիագնոստիկ տեխնոլոգիաները, գործունեության ընթացքում անձի և նրա մասնագիտական կարողությունների ձևավորման տեսությունը, ուսուցման որակի վերահսկողության վեբերյալ տեսական և փորձարարական հետազոտությունները, մասնագիտական մշանակալի արժեքներին նվիրված ուսումնասիրությունները (Վ.Պ. Նիկանդրով, Լ.Մ. Ջյուբին, Ի.Ա. Ջիննյայա, Թոմաս Կելլագան, Տ.Ա. Իլյինա, Վ.Ա. Կալնեյ, Ս.Ե. Շիշով, Վ.Ս. Սելիվանով, Ա.Պ. Սեյտեշև, Ե.Վ. Տկաչենկո, Վ.Ս. Ֆիլիպով Պրուվնդերսեն):

Ատենախոսության հիմնախնդրի լուծման նպատակով հետազոտության ընթացքում օգտագործվել են **տեսական և էմպիրիկ հետևյալ մեթոդները.**

Տեսական հետազոտության մեթոդներ՝ ՆՄԿ արդիականացման վերաբերյալ նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրություն, խնդրի առնչությամբ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գրականության, ժամանակակից տեսությունների համեմատական վերլուծություն, համադրում:

Եմպիրիկ մեթոդներ՝ դիտում, հարցումներ, անկետավորում, թեստավորում, հարցազուլյց, տվյալների վերլուծություն, սովորողների մասնագիտական պատրաստության գործընթացի, ուսումնառողների ուսումնասիմացական գործունեության ուսումնասիրություն, վերլուծություն, ընդհանրացում, հետազոտության արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական մշակում:

Յետազոտության իրականացման փուլերը.

Տեսական և գործնական հետազոտությունները կատարվել են 2007-2013թ.թ. երեք փուլով.

1. Առաջին՝ որոնող-վերլուծական փուլում (2007-2008թ.թ.) իրականացվել է իրավանորմատիվային և օրենսդրական փաստաթղթերի, մանկավարժական, հոգեբանական մասնագիտական գրականության, արհեստագործական կրթության որակի ապահովման փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, հիմնախնդրի արդիականության տեսական հիմնավորում, հիմնադրույթների և հետազոտական աշխատանքների պլանավորում, տեղեկատվության համակարգում: Բացահայտվել է հետազոտության հիմնախնդիրը, հիմնավորվել է հետազոտության թեման:
2. Երկրորդ՝ հետազոտական-փորձարարական փուլում (2009-2010թ.թ.) պարզաբանվել են պայմանները, ձևերը և մեթոդները, որոնք ապահովում են ՆՄԿ որակի ապահովման արդյունավետ մանկավարժական համակարգի հիմնադրույթների մշակումն ու իրականացումը:
3. Երրորդ՝ ընդհանրացնող փուլում (2011-2013թ.թ.) կատարվել է հետազոտության արդյունքների ընդհանրացում, փորձնական նյութի համակարգում, վերլուծություն և ընդհանրացում, հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքի ճշգրտում: Յետազոտության արդյունքները ստուգվել, համակարգվել և ներդրվել են: Յետազոտության արդյունքները հրատարակվել են գիտական հոդվածներում: Ձևակերպվել են ատենախոսության եզրակացությունները:

Ստացված արդյունքների և գիտական եզրակացությունների հիմնավորվածությունն ու հավաստիությունը

Երաշխավորվում են հետազոտական աշխատանքի մեթոդաբանական հիմքով, հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության վերլուծությամբ, հետազոտության նպատակին և խնդիրներին համապատասխան մեթոդների ընտրությամբ, փորձարարական աշխատանքի համակարգված բնույթով և արդյունքներով, տեսական եզրահանգումների և պրակտիկ արդյունքների բազմակի ստուգմամբ: Ստացված արդյունքների հուսալիությունն ապահովվել է մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների կիրառմամբ, մանկավարժական գործնական հետազոտությունների տևական բնույթով, մեթոդական տարբեր գործիքակազմերի միջոցով ստացված հետազոտական տվյալների և արդյունքների համադրությամբ և ճշգրտությամբ, հետազոտության արդյունքների գործնականում կիրառմամբ, աշխատանքի տրամաբանական կառուցվածքով, եզրակացությունների հիմնավորմամբ:

Յետազոտության փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնում, գործնական հետազոտությունների բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում՝ Վանաձորի պետական գյուղատնտեսական, Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջներում, Երևանի N1, Երևանի N9, Գեղարքունիքի մարզի Սևանի և Մարալիկի արհեստագործական ուսումնարաններում:

Յետազոտության գիտական նորույթը.

1. Որոշվել է ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի էությունը: Այն դիտարկվում է որպես պայմանների և համակարգային բաղադրատարրերի (նպատակների, նորմերի, ռեսուրսների, գործընթացների, վերջնարդյունքի) ամբողջականություն, որն անհրաժեշտ է բարձրորակ, մրցունակ մասնագետների պատրաստման համար:
2. Մշակվել են ՆՄԿ որակի ապահովման չափանիշներն ու ցուցանիշները, ըստ աշխատաշուկայի պահանջների՝ կրթության որակի ապահովման տեխնոլոգիաների արդիականացման ուղիները:

3. Սահմանվել են ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական պայմանները:
4. Բնութագրվել են ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի արդյունավետության ներքին և արտաքին ցուցանիշները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- Տեսականորեն հիմնավորվել է ՆՄԿ որակի ապահովման ոլորտում կոմպետենտային մոտեցումը՝ որպես հայեցակարգային հիմք,
- տեսականորեն հիմնավորվել և գործնական կիրառությամբ հաստատվել է սոցիալ-տնտեսական արդի պայմաններում ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի ներդրման անհրաժեշտությունը,
- սահմանվել են նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման նոր տեխնոլոգիաները՝ հիմնված սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների վրա,
- հիմնավորվել և գործնական կիրառությամբ ստուգվել են նախնական մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման արդյունավետության չափանիշները:

Հետազոտության գործնական նշանակությունը.

- Հետազոտության տեսական և գործնական նյութերը կարող են հիմք դառնալ ՆՄԿ բնագավառում կատարվող բարեփոխումների արդյունքների հետագա ուսումնասիրության, դասավանդման նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների մշակման համար,
- մշակված և գործնականում ստուգված որակի ապահովման մանկավարժական համակարգը թույլ է տալիս պատրաստել նախնական մասնագիտական կրթությամբ մրցունակ մասնագետներ,
- նախնական մասնագիտական հաստատություններում ուսումնառողների, դասավանդողների գործունեության մեր կողմից մշակված չափանիշները կարող են օգտակար լինել ժամանակակից արհեստագործական կրթության մանկավարժական պրակտիկայում:

Հետազոտության փորձաքննությունը.

Հետազոտության նյութերը լայն կիրառում ունեն Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարների, դասավանդողների, վարպետների և կրթության կառավարման մարմինների աշխատանքային պրակտիկայում:

Հետազոտության ընթացքի և արդյունքների մասին զեկուցվել է Խ.Աբովյանի անվան ՀՀՄՄ-ի 90-մյակին նվիրված գիտաժողովում, Խ. Աբովյանի անվան ՀՀՄՄ-ի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնում: Կատարված հետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվել են գիտական հանդեսներում և ժողովածուներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. ՆՄԿ արդիականացումը միտված է բարձրորակ և մրցունակ մասնագետների պատրաստությանը և պահանջում է մասնագիտական կրթության որակի ապահովման մանկավարժական համակարգի հայեցակարգային հիմքի մշակում:
2. ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի գործունեության արդյունավետությունն ապահովվում է կրթության որակին ներկայացվող չափանիշներին համապատասխանությամբ, կոմպետենտ մասնագետների պատրաստության գործընթացում զիտամեթոդական, կառավարման, կադրային և նյութական ռեսուրսների փոխկապակցվածությամբ, կրթության բովանդակության արդիականացմամբ, կրթական գործընթացում սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերություններով, կրթական ծառայությունների սուբյեկտների և աշխատաշուկայի ներկայացուցիչների փոխգործակցությամբ:
3. ՆՄԿ համակարգում կոմպետենտային մոտեցումը ենթադրում է կրթության որակի ապահովման մանկավարժական համակարգի զարգացումների կանխատեսում, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների յուրացման համար մանկավարժական և տեխնոլոգիական ապահովում, շուկայական տնտեսության արդի պայմաններում սոցիալական գործընկերության կազմակերպում, ուսուցման գործընթացում նորագույն տեխ-

- նուլզոհաների ներդրում, կրթական գործընթացի արդյունքների շարունակական մշտադիտարկում, կրթության կառավարման արդիականացում:
4. Սոցիալ-տնտեսական արդի պայմաններում ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգը համակարգային բաղադրատարրերի՝ նպատակի, իրավանդորմատիվային հիմքի, մասնագիտական կոմպետենտությունների ձևավորման վրա հիմնված մոդուլային ուսուցման և վեջնարդյունքի ամբողջությունն է, որի արդյունավետությունն ապահովվում է համապատասխան մանկավարժական պայմանների համալիրով:
 5. ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի արդյունավետությունը բնութագրվում է ներքին և արտաքին ցուցանիշներով: Արտաքին արդյունավետությունը ենթադրում է համակարգի աշխատանքի արդյունքների մշտադիտարկում՝ հիմնվելով այն նպատակների վրա, որոնք հասարակությունը դնում է ՆՄԿ առջև՝ կատարելով որոշակի ներդրումներ: Ներքին արդյունավետությունը որոշվում է ուսումնական հաստատությունների և անձի նպատակների համապատասխանության մշտադիտարկման արդյունքների հիման վրա:
- Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 140 համակարգչային էջ է: Աշխատանքը պարունակում է 8 գծապատկեր, մեկ աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԻՍՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված են հետազոտության արդիականությունը, նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, վարկածը, մեթոդաբանական հիմքը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Նախնական մասնագիտական կրթության որակի ապահովման տեսական և մեթոդաբանական հիմունքները» խորագրով գլխում դիտարկված են նախնական մասնագիտական կրթության որակի ապահովման մեթոդաբանական հիմունքները, ՆՄԿ որակի ապահովման հիմնախնդիրը որակի ապահովման եվրոպական մոտեցումների համատեքստում: Մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքներով բացահայտված է արիեստագործական կրթության ոլորտում առաջանցիկ զարգացման վրա բացասաբար ազդող գործոնները, կրթության նոր որակի ապահովման հարցում մանկավարժի մասնագիտական գործունեության նոր պայմանները:

Նախնական մասնագիտական կրթության որակի ընդհանուր գաղափարը սկսել է ձևավորվել վերջերս: Մինչ այդ նախնական մասնագիտական կրթության և ուսուցման արդյունավետությունը չափվել է մատչելիության և ուսումնական հաստատություն ընդունելության չափանիշներով: Նախորդ դարի 80-ական թվականներից սկսած՝ մասնագիտական կրթության որակի նկատմամբ դրսևորվեցին բազմակողմ մոտեցումներ: Ներկայումս նախնական մասնագիտական կրթության որակի հարցերը հատկապես կարևորվում են համակարգի զարգացման տեսանկյունից, որին հատուկ թափ է հաղորդվել Կոպենհագենի հռչակագրի ընդունումից հետո:

Մասնագիտական կրթության որակի ապահովումը ներառում է ինչպես կրթական գործունեության պայմանները, այնպես էլ բուն գործունեությունն ու ուսուցման արդյունքը: Որակի ապահովման համակարգում գործունեության զարգացման գործընթացում պարզ է դառնում, որ որակ հասկացությունը հիմնված է համեմատության վրա, որը հաշվի է առնում երեք հիմնական չափանիշներ՝ չափորոշիչներ, հեռանկարներ, մշտական կատարելագործում:

ՆՄԿ որակի գլխավոր ցուցանիշը սպառողների ու շահագրգիռ կողմերի պահանջներին բավարարելու շրջանավարտի կարողությունն է և ուսումնառության ընթացքում նրա մոտ ձևավորված աշխատանքային կոմպետենտությունները: Այդ պահանջների բովանդակությունը ամրագրվում է համապատասխան նորմատիվ փաստաթղթերում՝ մասնագիտությունների չափորոշիչների տեսքով և բովանդա-

կվում վերջնարդյունքներում: Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջներում հիմնական տեղը հատկացվում է մասնագիտական գլխավոր կոմպետենցիաների ձևավորվածությանը, շրջանավարտներին ներկայացվող պահանջները հիմնված են գործատուների պահանջների վրա, հետևաբար, դրանց սահմանման և գնահատման համար պահանջվում է սոցիալական գործընկերների մասնակցությունը:

Մասնագիտական կրթության որակի համակարգի զարգացման նոր միտում է որակի ապահովման տարբեր մեխանիզմների մշակումն ու կիրառումը: Այժմ գործատուների շատ քիչ մասին է գոհացնում նախնական մասնագիտական կրթության որակը: Ըստ գործատուների՝ շրջանավարտների մոտ ոչ բավարար է մասնագիտական կոմպետենտությունների ձևավորվածության և գործառնության հմտությունների զարգացման մակարդակը: Այս պատճառով էլ կրթության որակը ՆՄԿ հիմնախնդիրներից ամենակարևորն է: Միաժամանակ, կրթության որակը դիտարկվում է որպես ազգային անվտանգության, նրա տնտեսության տարբեր ոլորտների ու մարդկային ռեսուրսների մրցունակության կարևորագույն պայման:

Կրթության որակը բազմակողմանի, բազմաբնույթ, բազմագործառնական, բազմաբաղադրիչ երևույթ է, այն ներառում է՝ կրթական գործունեության պայմանների, գործընթացների, դրանց կառավարման և արդյունքների որակը:

Կրթության որակը մեկնաբանվում է որպես անձի կրթական պահանջները, հասարակության և պետության՝ որակյալ մասնագետներ ունենալու պահանջների բավարարման և համակարգի կրթական նպատակների իրականացման ապահովման հնարավորությունների արտահայտություն և դիտարկվում է որպես անձի, հասարակության և պետության հարաբերությունների համակարգի բնութագրում:

ՆՄԿ նոր որակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել՝ կարողությունների վրա հիմնված մոտեցում, կրթության բովանդակության մոդուլային ձևավորում, աշխատաշուկայի պահանջների կանխատեսում, գործատուների պահանջների հաշվառում, մասնագիտական ուսումնական հաստատությունների օպտիմալացում:

Մասնագիտական կրթության և ուսուցման որակի բարձրացման հիմնական մանկավարժական պայմանները հետևյալն են՝

- ուսուցում գործատուի և աշխատաշուկայի պահանջների հիման վրա,
- ՆՄԿ գործընթացի արդյունավետության ապահովում գիտամեթոդական մորաբարությունների և գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման միջոցով,
- կրթական գործընթացի նյութատեխնիկական բազայի արդիականացում,
- մասնագիտական կարիերայի համակարգերի ստեղծում և դրանց գործունեության իրականացման հոգեբանամանկավարժական ուղեկցություն:

Մասնագիտական կրթության հիմնական կոմպետենտություններն արտացոլվում են մասնագիտական կրթական չափորոշիչներում: Հիմնական կոմպետենտությունները մասնագիտական կրթության կարևոր բաղադրիչներն են: Որպեսզի որոշենք, թե որքանով է կրթական ծրագրերի բովանդակությունը համապատասխանում աշխատաշուկայի և գործատուների պահանջներին, անհրաժեշտ է նախնական մասնագիտական կրթություն ունեցող շրջանավարտների շրջանում իրականացնել ուսումնասիրություն և արդյունքները համեմատել մասնագիտական բնութագրիչների հետ, որոնք մշակվում են մասնագիտական կրթական չափորոշիչների հիման վրա: Դա հնարավորություն է տալիս որոշել մասնագետի գործառնության և աշխատանքային պահանջները՝ աշխատավայրում, մասնագիտության շրջանակներում իրականացնել մասնագիտական ընդունակությունների և հմտությունների դասակարգում, ստանալ տեղեկատվություն գործատուների պահանջների մասին:

Այսօր ՆՄՈՒՀ շրջանավարտների մրցունակությունը չի երաշխավորվում լոկալ նեղ մասնագիտական գիտելիքների տիրապետման պայմաններում: Անհրաժեշտ է ունենալ անհատական հատկանիշների կոնկրետ շարք, որը կհամապատասխանի երիտասարդ մասնագետի մասնագիտական հետաքրքրություններին և աշխատանքային դիրքին: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ՆՄՈՒՀ շրջանավարտների կոմպետենտային կանխատեսող մոդելների արդիականացում, ինչը հնարավորություն կտա հստակ որոշել աշխատողների և մասնագետների առաջնային կարողությունների համալիրը:

Երկրորդ՝ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության համակարգի բարեփոխումները և կրթության որակի ապահովման հիմնախնդիրը» զլխուն դիտարկված է Հայաստանի Հանրապետության ՆՄԿ բարեփոխումների գործընթացը, ՆՄԿ որակի ապահովման հիմնախնդիրը: Քննարկման արդյունքներով ներկայացված է ՆՄԿ բարելավման մեր նկատառումները, ՆՄԿ արդիականացման և զարգացման հեռանկարների վերավերյալ մեր մոտեցումները:

Քննարկման առարկա են դարձել կրթության որակի ապահովման հիմնախնդիրը կրթական ծրագրերի կատարելագործման համատեքստում, ՆՄՈՒՀ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, ՆՄՈՒՀ ուսումնական գործընթացի որակի ապահովման մանկավարժական պայմանների համալիրը: Քննարկվող նյութի շրջանակներում մեր կողմից էապես կարևորվել է մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման և դասավանդողների պրոֆեսիոնալիզմի կատարելագործման հիմնախնդիրները: Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական վերափոխումները անխզելիորեն կապված են կրթության ամբողջ համակարգի բարեփոխումների և արդիականացման հետ: Հանրապետությունում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ձևավորվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության համակարգը: Սակայն արհեստագործական ուսումնարաններում և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող քոլեջներում ուսումնական գործընթացի և ուսուցման միջոցների արդիականացման, տեղեկատվական-հաղորդակցական ու ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ գործընթացները բավականին դանդաղ են ընթանում մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում և այդ գործընթացը գիտատեսական և գիտամեթոդական խոր հիմնավորում չունի: Արհեստագործական կրթության ոլորտում տեղի ունեցող զարգացումները պահանջում են բարձր որակավորում ունեցող այնպիսի դասավանդողներ և վարպետներ, որոնք կտիրապետեն համապատասխան տեսական և գործնական գիտելիքների, մասնագիտական կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների: Համապատասխանաբար անհրաժեշտ է վերանայել ուսումնական գործունեության վերահսկողության սկզբունքները, մեթոդները, ձևերը, տեսակները և միջոցները:

Ներկայումս տնտեսության զարգացման հեռանկարային ծրագրերում էական տեղ է զբաղեցնում մասնագիտական կրթությամբ և բարձր որակավորմամբ կադրային այնպիսի ռեսուրսներով ապահովումը, ովքեր տիրապետում են մասնագիտական կարողությունների, հմտությունների և կոմպետենտությունների, ունեն շարունակական կրթության պահանջմունք: Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններն այն կառույցներն են, որոնց գործունեությունն ուղղված է տնտեսական և սոցիալական ոլորտները այդպիսի կադրային ռեսուրսներով ապահովելուն: Այդ ուսումնական հաստատությունների ծառայություններն ուղղված են սոցիալական կարևոր նպատակների՝ կրթության հասանելիության, դրա որակի ապահովման, մրցունակության իրականացմանը: Նախնական մասնագիտական կրթության առկա համակարգը դեռևս գտնվում է սկզբունքային բարեփոխումների փուլում, որը պայմանավորված է՝

- համաշխարհային տնտեսական ճգնաժամերով, որի հետևանքով փոփոխվում են մասնագետների պահանջարկն ու առաջարկը աշխատաշուկայում՝ կապված կադրերի մասնագիտական պատրաստվածության մակարդակի և որակի հետ,
- ժողովրդագրական գործընթացներով, որոնք կրթական ծառայությունների շուկայի մրցակցային պայմաններում փոփոխություններ են ներմուծում ինչպես ուսումնական հաստատությունների գործունեության մեջ, այնպես էլ սովորողների և նրանց ծնողների՝ ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքում:

Մասնագիտական կրթության զարգացման ռազմավարությունը բնութագրվում է երեք նպատակային ցուցանիշներով՝ մասնագետների պատրաստման պահանջ-

վող որակին հասնելը, տնտեսության կադրային պահանջարկների կանխատեսումը, շրջանավարտների աշխատանքի տեղավորման ապահովումը:

Փոփոխություններով պայմանավորված գործատուների կողմից նոր արտադրական տեխնոլոգիաների ներդրումը պահանջում է փոխել ՆՄԿ բովանդակությունը արհեստագործական ուսումնարաններում: Այս համատեքստում, ուսումնական հաստատությունները գործատուների հետ համատեղ պետք է մշակեն և շտկեն պահանջվող մասնագիտական կոմպետենությունները ապագա մասնագետների պատրաստման համար, ներկայացվեն մասնագետների պատրաստման նոր ծրագրեր: Այս ամենն ունի անմիջական ազդեցություն ուսանողների մասնագիտական պատրաստության գործնական համակարգի վրա, որը թույլ կտա պատրաստել աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մրցունակ մասնագետներ:

ՆՄՈՒՅ դաստիարակչական գործընթացը ամիջական ազդեցություն է ունենում մասնագետների պատրաստության որակի վրա: Այդ պատճառով էլ հաստատություններում ուսուցման գործընթացի ամենատարբեր տեսանկյունների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնադաստիարակչական գործընթացի առանձնահատկությունները:

ՆՄՈՒՅ ուսումնական գործընթացը կարող է արդյունավետ գործել և զարգանալ որոշակի պայմաններում: Մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում հետազոտությունների վերլուծությունը փաստում է ՆՄՈՒՅ ուսումնական գործընթացի մանկավարժական պայմանների ոչ բավարար ուսումնասիրված լինելու մասին, այն դեպքում երբ կրթությունը հարմարեցվում է ժամանակակից սոցիալ-տնտեսական հանգամանքներին: Մեր կարծիքով, ՆՄՈՒՅ ուսումնական գործընթացի արդյունավետության մանկավարժական պայմանների համալիրը ներառում է`

- ա) ուսանողների անձի հոգեբանամանկավարժական դիագնոստիկայի իրականացումը,
- բ) ուսանողների մասնագիտական դաստիարակության ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- գ) համալիր մեթոդական աշխատանքի միջոցով մանկավարժների մասնագիտական աճը` գիտականորեն հիմնավորված ուսումնական գործընթացում:

Մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումների համատեքստում ՆՄԿ պետական չափորոշիչ ներդրումը պահանջում է ուսուցման սկզբունքային նոր մոտեցումներ, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների մշակում, ուսուցման գործընթացի տեղեկատվական ապահովման համակարգի և գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման մեթոդների կատարելագործում: Ընդ որում, կարևոր է գիտակցումն այն բանի, որ չի կարելի անտեսել մանկավարժների նախորդ սերունդների ձեռքբերումները:

Մասնագիտական կրթական նոր չափորոշիչների նախագծումն ու ներդրումը, շատ ուսումնական առարկաների դասաժամերի կրճատումը, կրթական տարբեր բաղադրիչների ներմուծումը, սովորողների ընտրությամբ առարկաների ներդրումը, ապագա մասնագետների ինքնուրույն աշխատանքի, նրանց մասնագիտական, մշակութային, հասարակական, ստեղծագործական հնարավորությունների նկատմամբ պահանջների զգալի բարձրացումը պահանջում են այնպիսի տեխնոլոգիաների գիտական և գործնական մշակումներ, որոնք ամենասեղմ ժամկետներում և ամենանվազագույն ծախսերով կարող են տալ առավելագույն բարձր արդյունքներ, նկատելիորեն բարձրացնել շրջանավարտների պատրաստվածության որակը: Ինչպես ցույց է տալիս առաջատար գիտնականների և մասնագետների աշխատանքի վերլուծությունը, զարգացած պետությունների կրթական քաղաքականության հիմքում ուսուցման և դաստիարակության տեխնոլոգիաներն են, որոնք էլ դիտվում են որպես կրթության ոլորտում ավանդական մոտեցումների հաղթահարման գլխավոր միջոց և նոր մոտեցումների ու գաղափարների ծննդի բարենպաստ միջավայրի ապահովման երաշխիք և գործոն:

Բարձր որակավորմամբ մասնագետների պահանջը ենթադրում է ժամանակակից ուսուցման նոր մոտեցումների յուրացում: Եվ այսօր պրակտիկական կրկին

հաստատում է, որ կրթության նպատակը ոչ այնքան սովորողներին գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի ծավալի փոխանցումն է, որքան անձնային այնպիսի հատկություններ ձևավորելը, որոնք թույլ կտան նրան ակտիվորեն զարգացնել իր ընդունակությունները, ինքնակողմնորոշվել և ինքնադրսևորվել ստեղծագործական առումով, ինքնուրույն լուծել ամենատարբեր խնդիրներ՝ գործելով հաճախ փոփոխվող իրավիճակներում, և ամենակարևորը լուծել մասնագիտական ինքնիրացման հիմնախնդիրը:

Երրորդ գլուխը՝ «Մասնագետների պատրաստման որակի հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների և գործնական հետազոտությունների վերլուծությունը և արդյունքների ամփոփումը» գլուխը նվիրված է մասնագետների պատրաստման որակի հիմնախնդրի լուծմանը, մասնագիտական կրթության մշտադիտարկմանը, ՆՄԿ ոլորտում կրեդիտային համակարգի ներդրմանը, ՆՄՈՒՀ ուսումնադաստիարակչական աշխատանքների բարեփոխումներին, զարգացման նորարարական պայմաններում մասնագետների պատրաստման հայեցակարգային մոտեցումների պարզաբանմանը, հետազոտական աշխատանքի ներկայացմանը, արդյունքների վերլուծությանը և ամփոփմանը:

Կայուն տնտեսական աճը հանդիսանում է երկրում կյանքի որակի բարձրացման կարևորագույն գործոն: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը հանդիսանում է տնտեսության հետագա աճի հիմք, որն այսօր անհնար է՝ առանց բարձր որակավորում ունեցող աշխատուժի առկայության: Այսօր մեր երկիրը դուրս է գալիս համաշխարային շուկա՝ փորձելով ինտեգրվել միջազգային տնտեսական գոտու: Սրա հետ կապված տնտեսությունը ավելի խիստ կարիք կունենա աշխատուժի, որը կհամապատասխանի աշխատանքի որակի ժամանակակից պահանջներին և ընդունակ կլինի հարմարվելու աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին: Բնակչության պահանջարկը ՆՄԿ համակարգում ներկայացվելիք ծառայությունների հանդեպ առաջին հերթին կախված է նրանից, թե աշխատաշուկայում որքան պահանջված են մասնագիտական ուսումնարանների շրջանավարտները:

ՆՄԿ ոլորտի նկատմամբ վստահության բացակայությունն այդ ուսումնական հաստատություններում ծնում է կրթության որակի անկում: Քանի դեռ չեն փոխվել բնակչության և գործատուների նախասիրությունները բարձրագույն կրթության նկատմամբ, ՆՄԿ համակարգում իրավիճակը կպահպանվի: Հարկ է նկատել, որ հապաղում է ոչ արդյունավետ կրթական ծրագրերի բարեփոխման գործընթացը: Արդյունքում շատ ուսումնական հաստատություններ ամբողջովին չեն ստանում եկամուտների էական մասը, որը կարող էին ստանալ ավելի ակտիվ մարքեթինգային քաղաքականություն վարելու դեպքում: Իրոք, գործնականում ոչ մի հաստատություն չի անցկացնում կրթական ծրագրերի և աշխատանքի շուկայի հետազոտություններ պրոֆեսիոնալ մակարդակով: Հիմնականում պահանջարկի և առաջարկի հետազոտությունն անցկացվում է կենցաղային միջոցներով:

Հայաստանում կրեդիտային համակարգը կարող է նպաստել ՆՄԿ համակարգի իրատեսական դառնալուն: Կրեդիտային համակարգի ներդրումը հնարավորություն կտա հաստատել վստահության մթնոլորտ, նպաստելով անհատների առաջխաղացմանն ուսումնառության մեկ մակարդակից մյուսը: Կրեդիտային համակարգի կիրառումը պահանջում է ՆՄԿ ամբողջ համակարգի արմատական փոփոխություն՝ որակավորումների ազգային շրջանակի սահմաններում:

ՆՄՈՒՀ նյութատեխնիկական ապահովվածության ուսումնասիրության արդյունքում, մի շարք հաստատություններում արձանագրվել է էական դեֆիցիտ: Հիմնական խնդիրներից մեկը ժամանակակից արտադրական սարքավորումների անբավարարությունն է: Բնական է, այս հանգամանքը էապես նվազեցնում է մասնագետների պատրաստման որակը:

Մասնագիտական կրթության զարգացման խոչնդոտող գործոններից մեկը անհրաժեշտ որակավորում ունեցող կադրերի անբավարարությունն է, դեռևս պահպանվում է կադրերի «ծերացման» միտումը:

Կոնկրետ մասնագիտությունների գծով մասնագետների պահանջարկի փոփոխություններին օպերատիվ արձագանքելու նպատակով անհրաժեշտ է ապահովել

գործատուների մշտական համագործակցությունը ուսումնական հաստատությունների և գործադիր իշխանության մարմինների հետ, որոնք իրավասու են պլանավորել աշխատանքային ռեսուրսները:

ՆՄԿ որակի կառավարման մեր կողմից մշակված համակարգը ենթադրում է կրթական գործունեության որակյալ պայմանների և գործընթացի որակի ապահովում, դրանց բավարարման պարագայում կարելի է դատել կրթական գործունեության արդյունքների որակի մասին: Մեր կողմից մշակված մանկավարժական համակարգում ռեսուրսի որակի տակ հասկանում ենք մանկավարժական կազմի և արտադրական ուսուցման վարպետների ներուժի որակը, պետական կրթական չափանիշներին համապատասխան ուսումնական առարկաների համալիր մեթոդական ապահովումը, ենթակառուցվածքների որակը:

Սոցիալոգումներին մասնակցել են՝ 6 ՆՄՈՒՅ և քոլեջների շուրջ 780 ուսանողներ, ուսումնական հաստատությունների ղեկավար կազմերի 20 աշխատակիցներ (տնօրեններ, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեններ), 72 դասավանդողներ և արտադրական ուսուցման վարպետներ:

Չետազոտության արդյունքներից պարզվում է, որ աշխատավայրերում ուսումնառության հնարավորությունները դեռևս խիստ սահմանափակ են, իսկ կրեդիտների հասկացությունը գրեթե բացառապես կապված է միայն բարձրագույն կրթության հետ: Կրեդիտային համակարգի ներմուծման հնարավորության մասին խոսելիս՝ ՆՄԿ ղեկավարներն ու դասավանդողները շեշտում էին, որ կրեդիտային համակարգի ներդրումը կարող է ամրապնդել ճանաչման ու սերտիֆիկացման ընթացակարգերի դերն ու նշանակությունը: Փոքր-ինչ ավելի մեծ է այնպիսի շահառուների հետաքրքրությունը գնահատման և քննական կարգերի նկատմամբ, ինչպիսիք են ՆՄԿ և վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները և հանրապետական ու տեղական իշխանության մարմինները, սակայն մնացածների ներգրավվածությունն այդ գործընթացներում աննշան է: Հայաստանում կրեդիտային համակարգի ներդրման գործընթացում կարևորագույն խնդիր է այն անհամապատասխանությունը, որ գոյություն ունի ՆՄԿ համակարգում կրեդիտային համակարգի հետ առնչվող գործընթացներում զանազան շահառուների փաստացի և ցանկալի ներգրավվածության միջև:


ՆՄՈՒՅ կրթության որակի ապահովման մանկավարժական պայմանների վերլուծությունը հնարավորություն ընձեռեց իրականացնել հետազոտություն հիմնված տեսական ենթադրության վրա, որ ՆՄՈՒՅ ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված է մանկավարժական պայմանների որոշակի համալիրից: Համալիրը ներառում է ուսանողների անձի հոգեբանական ու ուսումնական դիագնոստիկայի իրականացումը, ուսանողների մասնագիտական կրթության միջոցով մասնագետի դաստիարակության ծրագրի մշակումն ու իրականացումը, դասավանդող կազմի մասնագիտական կարողության աճը գիտականորեն հիմնավորված ուսումնական գործընթացում:

Գործնական կիրառության միջոցով կարելի է գնահատել ուսումնադաստիարակչական գործընթացում մանկավարժական պայմանների արդյունավետությունը և սահմանել դրանց օպտիմալ համադրությունը: Չետազոտության նպատակն էր գործնականում ստուգել մեր կողմից ՆՄՈՒՅ կրթության որակի ապահովման վերաբերյալ մոտեցումների, մանկավարժական պայմանների համալիրի, ուսուցման գործընթացի որակի ապահովման ուղղությամբ իրականացվող գործունեության արդյունավետությունը, հիմնավորել տեսական դատողությունների արդյունքում ստացված մտահանգումները: Նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է ուսումնական գործընթացի վրա որոշակի մանկավարժական պայմանների ազդեցությանը, նշենք որ հետազոտության իրականացման համար պահանջվում էր համեմատաբար երկար ժամանակահատված: Այդ պատճառով էլ հետազոտությունը տևել է չորս տարի, որը, մեր կարծիքով, բավարար էր արդյունքների ամփոփման և ամրագրման համար:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, հետազոտության սկզբում մեր կողմից իրականացվեցին սոցիոլոգիական հարցումներ, ընդգրկելով ՆՄԿ ծրագիր

իրականացնող ուսումնական 6 հատատություններ՝ Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջը, Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջը, Երևանի N1 արհեստագործական պետական ուսումնարանը, Երևանի N9 արհեստագործական պետական ուսումնարանը, Գեղարքունիքի մարզի Սևանի արհեստագործական պետական ուսումնարանը, Մարալիկի արհեստագործական պետական ուսումնարանը: Հիշյալ ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի 20 աշխատակիցների (տնօրեններ, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեններ) շրջանում իրականացվել է սոցիալոգիաներ, մեր կողմից մշակված հարցաթերթիկով:

1. «Ինչպե՞ս եք գնահատում գնահատման ընթացակարգեր»-ը հարցին հարցվածների 25%-ը դժվարացել է պատասխանել, 45%-ը գնահատման ընթացակարգերը գնահատել է դրական, 30%-ը՝ բացասական:
2. «Ինչպե՞ս եք գնահատում անցումը կրեդիտային համակարգին» հարցին 15%-ը դժվարացել է պատասխանել, 60%-ը գնահատել է դրական, 25%-ը՝ բացասական:
3. «Արդյոք, իրատեսակա՞ն է կրեդիտային համակարգի ներդրումը ներկա փուլում» հարցին 10%-ը դժվարացել է պատասխանել, 25 %-ը գնահատել է իրատեսական և 65%-ը՝ ոչ իրատեսական:
4. «Արդյոք հիմնարա՞ր են սերտիֆիկացման ընթացակարգերը» հարցին 13%-ը դժվարացել է պատասխանել, 32%-ը պատասխանել է «այո» և 55%-ը՝ «ոչ»:
5. «Արհեստագործական կրթության մեջ ո՞րն է ավելի կարևոր, լսարանային պարապմունքները, թե՞ պրակտիկան» հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 9%-ը, 38%-ը պատասխանել է լսարանային պարապմունքները, 53%-ը պատասխանել է պրակտիկան:
6. «Աշխատաշուկան ու՞նի ազդեցություն ուսումնական գործընթացի վրա» հարցին 5%-ը դժվարացել է պատասխանել, 86%-ը պատասխանել է «այո» և 9%-ը՝ «ոչ»:
7. «Դուք գո՞հ եք այժմ կիրառվող որակավորման չափորոշիչներից և բնութագրերից» հարցին 20 %-ը դժվարացել է պատասխանել, 40%-ը պատասխանել է «այո» և 40%-ը՝ «ոչ»:




Պճ. 1 Դեկավար կազմի շրջանում ուսուցման գործընթացի արդյունավետության բացահայտման վերաբերյալ հարցումների արդյունքները

Հարցումներ են իրականացվել նաև ՆՄԿ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների՝ քոլեջների և արհեստագործական ուսումնարանների թվով 780 սովորողների շրջանում:


1. Հարցվածների 35%-ը դժվարացել է պատասխանել «Ինչպե՞ս եք գնահատում գնահատման ընթացակարգեր»-ը հարցին, 30%-ը գնահատման ընթացակարգերը գնահատել է դրական, 25%-ը՝ բացասական:
2. «Ինչպե՞ս եք գնահատում մոդուլային ուսուցումը» հարցին 55%-ը դժվարացել է պատասխանել, 20%-ը գնահատել է դրական, 25%-ը՝ բացասական:
3. «Գո՞հ եք Ձեզ դասավանդող մանկավարժական կազմից» հարցին 20%-ը դժվարացել է պատասխանել 31%-ը պատասխանել է «այո» և 49%-ը՝ «ոչ»:

4. «Գո՞հ եք Ձեր արտադրական ուսուցման վարպետներից» հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 19%-ը, 31%-ը պատասխանել է «այո», 50%-ը պատասխանել է «ոչ»:
5. «Օգտվում ե՞ք և գոհ ե՞ք ուսումնարանի գրադարանից» հարցին 5%-ը դժվարացել է պատասխանել, 22%-ը պատասխանել է «այո» և 73%-ը՝ «ոչ»:
6. «Գոհ ե՞ք ուսումնարանի մասնագիտական կրթության պայմաններից» հարցին 24%-ը դժվարացել է պատասխանել, 19%-ը գիտատել է դրական, 57%-ը՝ բացասական:
7. «Գո՞հ եք ուսումնարանի կառավարման համակարգից, մասնակցում եք ուսխորհրդի աշխատանքներին» հարցին 21%-ը դժվարացել է պատասխանել, 21%-ը պատասխանել է «այո» և 58%-ը՝ «ոչ»:
8. «Կարծում եք, որ Ձեր մասնագիտությունը պահանջարկ ունի աշխատաշուկայում» հարցին 39%-ը դժվարացել է պատասխանել, 29%-ը պատասխանել է «այո» և 32%-ը՝ «չգիտեմ»:
9. «Ձեր ստացած կրթությունը բավարար է՞ աշխատանք գտնելու համար» հարցին 39%-ը դժվարացել է պատասխանել, 31%-ը պատասխանել է «այո» և 30%-ը՝ «չգիտեմ»:



Գծ. 2 Ուսանողների շրջանում ուսուցման գործընթացի արդյունավետության բացահայտման վերաբերյալ հարցումների արդյունքները

«Ձեր մասնագիտական պատրաստության գործընթացում որն եք ավելի կարևորում» հարցին 15%-ը դժվարացել է պատասխանել, 35%-ը «պրակտիկան», 25%-ը «լսարանային պարապմունքները» 25%-ը «գործնական և սեմինար պարապմունքները»:



Գծ. 3 Մասնագիտական պատրաստության գործընթացում տեսական, գործնական և պրակտիկ բաղադրիչների գնահատման վերաբերյալ ուսանողների շրջանում հարցման արդյունքները

Հետազոտության արդյունքներից պարզվում է, որ աշխատավայրերում ուսումնառության հնարավորությունները դեռևս խիստ սահմանափակ են, իսկ կրեդիտային համակարգի հասկացությունը ՆՄԿ ոլորտում դեռևս չի ընկալվում և գրեթե բացառապես կապվում է միայն բարձրագույն կրթության հետ:

ՆՄԿ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով հաստատությունների դասավանդող կազմերի շրջանում իրականացված հարցումների արդյունքներում մեր կողմից առանձնացվել են ՆՄԿ որակի ապահովման հետևյալ գործոնները՝

1. պետական կրթական չափորոշիչների արդիականացումը,
2. մասնագիտության պահանջարկը,
3. գործատուների պահանջների հաշվառումը կրթական ծրագրերի արդիականացման գործընթացում և դրա ազդեցությունը թողարկվող մասնագետների որակի ու պահանջարկի վրա,
4. ուսումնական մոդուլների ամբողջականության արտահայտվածությունը ուսումնական պլաններում և դրանց բովանդակային համապատասխանությունը չափորոշչային պահանջներին,
5. դասավանդողների և վարպետների որակավորումների շարունակական բարձրացումը, համապատասխանությունը դասավանդվող առարկային,
6. դասավանդող կազմի և վարպետների աշխատանքի ընդունման ընթացակարգի մշակումը և կադրերի բնականոն սերնդափոխության ապահովումը,
7. դասավանդողների և վարպետների մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությունը, աշխատանքը երիտասարդ մասնագետների հետ,
8. ուսանողների մասնագիտական հետաքրքրությունները, մասնագիտական և հասարակական ակտիվությունը,
9. տեղեկատվական և հեռահաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաներով և ուսուցման տեխնիկական միջոցներով ապահովվածությունը,
10. ուսումնական տարածքների համապատասխանությունը նորմերին,
11. լաբորատոր սարքավորումների արդիականությունը,
12. արհեստանոցային սարքավորումների արդիականությունը,
13. գրադարանի, տեղեկատվության որոնման հնարավորությունների առկայությունը, ուսումնական և տեղեկատվական գրականությամբ ապահովվածությունը,
14. մարզադահլիճների, մարզահրապարակների համապատասխանությունը նորմատիվային պահանջներին և մարզագույքով հագեցվածությունը,
15. ուսուցման գործընթացում դասավանդման ժամանակակից մեթոդների, մանկավարժական և մուլտիմեդիական տեխնոլոգիաների գործածությունը,
16. պրակտիկայի բազայի համապատասխանությունը մասնագիտությանը, դրա հագեցվածության արդիականությունը,
17. դասավանդողների սոցիալական երաշխիքները,
18. ուսանողների սոցիալական երաշխիքները:


Հետազոտության հաջորդ փուլում մեր կողմից հետազոտության բազա հանդիսացող ՆՄԿ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում իրականացվել է վերոնշյալ 18 գործոնների կրթության որակի վրա ազդեցության մշտադիտարկում և գնահատում:

Գործնական հետազոտությունն իրականացվել է Երևանի N1 արհեստագործական պետական ուսումնարանում, Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջում: Այդ նպատակով իրականացվել է կրթական գործունեության պայմանները էապես բարելաված հաստատությունների (Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ, Երևանի N1 արհեստագործական պետական


ուսումնարան) 2011թ. և 2012թ. ուսումնական գործընթացի արդյունքները, առանձնացնելով բարձր, միջին, ցածր, չափազանց ցածր մակարդակներ:

Աղյուսակ 1 Երևանի N1 արհեստագործական պետական ուսումնարանի, Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի ուսումնական արդյունքները 2011թ. և 2012թ.

Մակարդակներ	Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ		Երևանի N1 արհեստագործական ուսումնարան	
	2011թ.	2012թ.	2011թ.	2012թ.
1. Բարձր	9.1%	12.4%	10.4%	15.7%
2. Միջին	31.7%	46.8%	35.3%	44.6%
3. Ցածր	41.4%	26.2%	38.9%	29.9%
4. Չափազանց ցածր	17.8%	14.6%	15.4%	9.8%



Պճ. 4 Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի ուսումնական արդյունքները 2011թ. և 2012թ.




Պճ. 5 Երևանի N1 պետական արհեստագործական ուսումնարանի ուսումնական արդյունքները 2011թ. և 2012թ.


Ներկայացված աղյուսակը և գծապատկերները հավաստում են, որ հետազոտության բազա հանդիսացած Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի արհեստագործական կրթական ծրագրի իրականացման և Երևանի N1 արհեստա-

գործական պետական ուսումնարանի գործունեության պայմանների էական բարելավման արդյունքում ուսումնական գործընթացի արդյունքների էական աճ է գրանցվել առանձնացված բարձր և միջին մակարդակներում, իսկ ցածր և չափազանց ցածր մակարդակներում արձանագրվել է առաջընթաց:


Մեր կողմից մշակված և վերը ներկայացված ՆՄԿ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության որակի վրա ազդող պայմանների բարելավման գործընթացը թույլ է տվել հաշվել Երևանի N1 արհեստագործական պետական ուսումնարանի և Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի համար միջին գումարային գնահատականները 2009թ.:




Գծ. 6 Երևանի N1 արհեստագործական պետական ուսումնարանի կրթության որակի մշտադիտարկման արդյունքները (միջին գումարային գնահատականը՝ 5.16)



Գծ. 7 Երևանի N1 արհեստագործական պետական ուսումնարանի կրթության որակի ակնկալվող արդյունքները (միջին գումարային գնահատականը՝ 6.9)



Գծ. 8 Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի կրթության որակի մշտադիտարկման արդյունքները (միջին գումարային գնահատականը՝ 5.16)



Գծ. 9 Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի կրթության որակի ակնկալվող արդյունքները (միջին գումարային գնահատականը՝ 7.1)

Ընտրված ցուցանիշներին համապատասխան՝ վերոնշյալ ուսումնական հաստատությունների՝ 2013թ. համար հաշվարկված ակնկալվող միջին գումարային գնահատականները վկայում են հաստատությունների կրթության որակի ապահովման հարցում առաջընթացի և կառավարման տեխնոլոգիաների արդյունավետության մասին:

Այսպիսով՝ մեր կողմից բացահայտված և գործնական հետազոտության միջոցով հաստատված մանկավարժական պայմանների համալիրը նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է և բավարար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի զարգացման հիմնական նախադրյալը աշխատաշուկայի հետ կապի ու կոմպետենտությունների վրա հիմնված կրթության արդիականացումն է: Կրթության որակի գլխավոր ցուցանիշը մասնագիտական կոմպետենտությունների տիրապետող շրջանավարտն է, որը սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական փոփոխությունների արդի պայմաններում կարող է բավարարել որակյալ և մրցունակ մասնագետին ներկայացվող արդի պահանջները:
2. Կրթության որակը ներառում է ուսուցման գործընթացի պայմանների, գործընթացների կառավարման և արդյունքների որակը: Պատրաստվող մասնագետների որակը պայմանավորված է կրթական գործունեության պայմանների և կրթական գործընթացի որակով: Կրթության որակի ապահովումը առաջադրված նպատակի և վերջնարդյունքների միջև համապատասխանությունն է:
3. Մասնագիտական կրթության նոր որակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել կոմպետենտությունների վրա հիմնված մոդուլային մոտեցում, կրթության բովանդակության արդիականացում, աշխատաշուկայի պահանջների կանխատեսում, գործատուների պահանջների հաշվառում, կրթության և արտադրության ուղորտների ինտեգրում:
4. ՆՄԿ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների մշակման գործընթացում պետք է հաշվի առնել գործատուների և աշխատաշուկայի պահանջները, ուսանողների կրթական պահանջմունքները, ուսուցման արդի տեխնոլոգիաների ներդրման հրամայականը, ըստ միջազգային չափանիշների սովորողներին ներկայացվող որակական պահանջները:
5. ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգի արդյունավետությունն ապահովվում է որակի ապահովման ռազմավարության իրականացմամբ՝ կադրային, գիտամեթոդական, կառավարման, և նյութական ռեսուրս-

- ների փոխկապակցվածությամբ, աշխատաշուկայի պահանջարկով պայմանավորված մասնագիտական գործունեության բովանդակության արդիականությանը, կրեդիտային համակարգի ներդրմամբ:
6. ՆՄԿ համակարգում կոմպետենտային մոտեցումը ենթադրում է կրթության որակի ապահովման մանկավարժական համակարգի զարգացումների կանխատեսում, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների յուրացման համար մանկավարժական և տեխնոլոգիական ապահովում, շուկայական տնտեսության արդի պայմաններում սոցիալական գործընկերության կազմակերպում, ուսուցման գործընթացում նորագույն տեխնոլոգիաների ներդրում, ուսուցման գործընթացի արդյունքների շարունակական մշտադիտարկում, կրթության կառավարման արդիականացում:
 7. Մշտադիտարկումը ՆՄԿ որակի գնահատման, ուսուցման գործընթացի մասնակիցների ուսումնական արդյունքների և մասնագիտական աճի արձանագրմանն ուղղված որոշումների կայացման տեղեկատվական հիմք է:
 8. Սոցիալ-տնտեսական արդի պայմաններում ՆՄԿ որակի ապահովման մանկավարժական համակարգը համակարգային բաղադրատարրերի՝ նպատակի, իրավանդորմատիվային հիմքի, մասնագիտական կոմպետենտությունների ձևավորման վրա հիմնված մոդուլային ուսուցման և վերջնարդյունքի ամբողջությունն է, որի արդյունավետությունն ապահովվում է համապատասխան մանկավարժական պայմանների համալիրով:
Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում
 1. Խաչատրյան Վ.Ն., Նախնական մասնագիտական կրթության մի քանի նկատառումներ, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, N3, 2009, էջ 149-151:
 2. Խաչատրյան Վ.Ն., Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, N7-9, 2011, էջ 17-22:
 3. Խաչատրյան Վ.Ն., Նախնական մասնագիտական բնագավառի բարեփոխումները սոցիալական գործընկերության համատեքստում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, N7-9, 2012, էջ 13-19:
 4. Պետրոսյան Հ.Հ., Խաչատրյան Վ.Ն., Մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման և դասավանդողների պրոֆեսիոնալիզմի կատարելագործման հիմնախնդիրները նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված «Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար» գիտաժողովի նյութերի ժողովածու, 2012թ., I պրակ, էջ 424-429:
 5. Խաչատրյան Վ.Ն., Արհեստագործական կրթության ոլորտում մասնագետների պատրաստման որակի գործնական ուսումնասիրություններ, «Մանկավարժական միտք» հանդես, 2014, (3), էջ 99-103:

ВАРУЖАН НОРИКОВИЧ ХАЧАТРЯН

РЕШЕНИЕ ПРОБЛЕМЫ ПОДГОТОВКИ СПЕЦИАЛИСТОВ В ПРОЦЕССЕ РЕФОРМ НАЧАЛЬНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00. 01. «Теория и история педагогики».

Защита состоится 26-го сентября 2014г. в 14⁰⁰ ч. на заседании специализированного совета педагогики 065 ВАК по присуждению ученой степени при Армянском

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Повышение качества начального профессионального образования (НПО) в нынешних условиях социально-экономического развития страны становится злободневной проблемой. Качество (НПО) раскрывается с содержательных и управленческих точек зрения, в плане развития разных образовательных программ, расширения интеграции учебных заведений разного типа и создания новых. Вместе с тем, (НПО) должно обеспечить не только приобретение профессии студентами, но и обеспечить условия для становления и продвижения в сфере профессиональной деятельности.

За последние десятилетия первоочередной задачей стала осуществление комплексных мер по удовлетворению спроса на высококвалифицированных специалистов, которое требует разработки теоретических основ системы управления качеством образования.

Целью исследования является решение проблемы обеспечения качества подготовки специалистов в рамках НПО.

Задачи исследования:

1. Изучить теоретические и методологические предпосылки педагогической системы обеспечения качества НПО.
2. Проанализировать процесс реформ в системе начального профессионального образования, обосновать необходимость реформ в контексте региональных факторов.
3. Раскрыть критерии и показатели обеспечения качества начального профессионального образования.
4. Разработать комплекс условий обеспечения качества начального профессионального образования.
5. Проанализировать влияние методов обучения и современных педагогических технологий на совершенствования процесса обучения.
6. Разработать методические рекомендации по повышению качества начального профессионального образования, обосновать продуктивность обеспечения качества педагогической системы.

Научная новизна исследования:

1. Определить сущность педагогической системы обеспечения качества начального профессионального образования.
2. Разработать критерии и показатели обеспечения качества начального профессионального образования согласно требованиям рынка труда, направленные на внедрение новых продуктивных технологий обеспечения качества начального профессионального образования.
3. Установить педагогические условия обеспечения качества начального профессионального образования.
4. Охарактеризованы внутренние и внешние показатели продуктивности педагогической системы обеспечения качества начального.

Теоретическое значение исследования

1. Теоретически обоснованы в сфере обеспечения качества начального профессионального образования компетентного подхода как концептуальная основа.

2. Теоретически обоснована и экспериментально подтверждена необходимость внедрения педагогической системы обеспечения качества начального профессионального образования в нынешних условиях социально-экономического развития общества.
3. Установлены новые технологии управления образовательных учреждений начального профессионального образования, основанные на субъект - субъект взаимоотношений.

Практическое значение исследования

- Теоретические и практические материалы исследования могут стать основой в области начального профессионального образования с целью исследования результатов реформ, разработки новых методов обучения и технологий.
- Разработанная и экспериментально проверенная педагогическая система обеспечения качества позволяет подготовить конкурентоспособных специалистов в области начального профессионального образования.
- В учреждениях начального профессионального образования, разработанные нами критерии оценки деятельности студентов и преподавателей могут быть полезными в педагогической практике современного профессионального образования.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, 2 главы, заключения, библиографии, приложений.

VARUZHAN NORIKO KHACHATRYAN

SOLVING THE PROBLEM OF TRAINING IN THE PROCESS OF REFORM OF INITIAL VOCATIONAL TRAINING

REZUME

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01. - "The theory and history of pedagogy".

The defense of the thesis will be held at 14⁰⁰ on September 26, 2014 at the session of the Special Board 065 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Yerevan State University, address: 0025, 52^a, Abovyan st., Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N 203.

SUMMARY

Relevance of research. Improving the quality of initial vocational education (IVE) in the current conditions of social and economic development of the country becomes a key issue. The quality of IVE is revealed from the content and administrative points of view, in terms of developing different educational programs, enhances the integration of various types of educational institutions and creates new ones. However, ((IVE) should provide not only the acquisition of professionalism by students, but also provide the conditions for the establishment and promotion in the field of professional activity.

Over the past decade, the implementation of comprehensive measures has become very important to meet the demands for highly skilled professionals, which requires the development of the theoretical foundations of the system of quality management education.

Aim of this study is to solve the problem of the quality of training within the IVE.

The objectives of research:

1. Examine the theoretical and methodological foundations of providing IVE quality in terms of modernizing education system.
2. Analyze the process of reforms in the sphere of vocational education, justify the need for reforms in the context of regional factors.
3. Expand criteria and indicators for quality assurance of initial vocational education.
4. Develop a set of conditions to ensure the quality of initial vocational education.
5. Analyze the impact of teaching methods and modern teaching technologies to improve the teaching/ learning process.
6. Develop guidelines for improving the quality of vocational education, justify the productivity of teaching quality assurance system.

The scientific novelty of the research:

1. Determine the nature of pedagogical quality assurance system of initial vocational education.
2. Develop criteria and indicators for quality assurance of initial vocational education according to the requirements of the labor market aimed at the introduction of new productive technologies to ensure quality of initial vocational education.
3. Set pedagogical conditions of quality assurance of initial vocational education.
4. Characterize the internal and external productivity indices of ensure quality assurance of initial professional system.

The theoretical value of research

1. It theoretically substantiates the competent approach as a conceptual basis in the sphere of initial professional education to ensure quality.
2. It is theoretically substantiated and experimentally confirmed the need to implement educational quality assurance system of initial vocational education in the current conditions of social and economic development of society.
3. It is installed new control technologies of educational institutions of primary vocational education, based on subject - subject relationships.

The practical value of research.

- The theoretical and practical materials of the research can be the basis of primary vocational education to study results of the reforms, develop new teaching methods and technologies.
- The developed and experimentally tested pedagogical quality assurance system allows preparing competitive specialists in the field of initial vocational education.
- The developed criteria for evaluating students and teachers can be helpful in teaching practice in the system of vocational institutions.

The content of the research is reflected in the structure of the thesis, which consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and appendices.

